ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9. 1965 Общественные науки

Գ. Մ. Գեղամյան

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱԿՊ ԿԵՆՏԿՈՄԻ ՄԱՐՏՅԱՆ (1965 Թ.) ՊԼԵՆՈՒՄԻ ՈՐՈՇՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը մեր երկրի տնտեսական և կուլտուրական հետագա զարգացման հարցերը լուծում է միշտ ելնելով կոմունիստական շինարարության պրակտիկայից և կուտակված պատմական փորձից։ Դրա լավագույն օրինակներից մեկն է ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան (1965 թ.) պլենումը, որտեղ գիտականորեն հիմնավորված, բազմակողմանի վերլուծման ենթարկվեցին սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման հարցերը և մի շարք անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկվեցին այդ ուղղությամբ։ Կուսակցության մարտյան պլենումի որոշումները պրակտիկ և տեսական կարևոր նշանակություն ունեն ՍՍՌՄ էկոնոմիկայի զարգացման, գյուղատնտեսության ղեկավարման մեթոդների կատարելագործման, տեղական նախաձեռնության խթանման և բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման գործում։

Ինչպես հայտնի է, ետպատերազմյան շրջանում սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումը, որը ճիշտ կուրս մշակեց կոլտնտեսությունների ու սովխոզների նյութատեխնիկական բազայի ամրապնդման, աշխատավորության նյութական շահագրգռվածության բարձրացման, ներկոլտնտեսային դեմոկրատիայի զարգացման ուղղությամբ։ Քանի դեռ այդ որոշումները կենսագործվում էին, սոցիալիստական գյուղատնտեսությունը որոշակի հաջողությունների հասավ։ «Սեպտեմբերյան պլենումից հետո առաջին հինգ տարիներում,—ասաց ընկ. Լ. Ի. Բրեժնևը,—զգալիորեն ընդլայնվեցին ցանքատարածությունները, բարձրացավ բերքատվությունը, ավելացավ գյուղատնտեսության համախառն ու ապրանքային արտադրանքը»[1]։

Այդ նվաճումները ձեռք բերվեցին ՍՄԿՊ ղեկավարությամբ սովետական ամբողջ ժողովրդի հերոսական պայքարի շնորհիվ։ Կուսակցության նախաձեռնությունները կենսագործելու նպատակով տասնյակ հազարավոր մասնագետներ, կուսակցական ու սովետական աշխատողներ մեկնեցին գյուղ մշտական աշխատանքի։ Հայկական ՍՍՌ-ում միայն 1953—1955 թթ կոլտնտեսություններում աշխատելու համար գյուղ ուղարկվեցին ավելի քան 500 մասնագետներ ու ղեկավար աշխատողներ։ ՄՏ կայանները հարստացան գյուղատնտեսական մեքենաներով ու գործիքներով, ավելի ռացիոնալ օգտագործվեցին հողատարածությունները։ Այդ բոլորի շնորհիվ զգալիորեն ավելացավ գյուղատնտեսական արտադրանքը։ Այսպես, 1953—1958 թթ. հանրապետությունում հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը 7,1 ցենտներից հասավ 9,5 ցենտների, բամբակի բերքատվությունը՝ 20,8—25,3 ց., շաքարի ճակնդեղինը՝

1 *Տե՛ս «Սովետական Հայաստան», № 72, 1965 թ.։*

164—240 գ., ծխախոտինը՝ 9—12,6 գ., եգիպտացորենինը՝ 14,9—22,3 ցենտների և այլն[2]։

Խոշոր նվաճումների հասան հանրապետության այգեգործությամբ զբաղվող տնտեսությունները։ Պտուղների համախառն արտադրությունն այդ նույն ժամանակաշրջանում աճեց 14 հազար ցենտներով, իսկ խաղողինը՝ ավելի քան 200 հազար ցենտներով։

Դաշտավարության և այգեգործության բնագավառում ձեռք բերած հաջողությունները բարերար ազդեցություն ունեցան անասնաբուծության զարգացման համար։ Կերի բազայի ամրապնդման և խնամքի բարելավման շնորհիվ, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը աճեց 114 հազարով, մսի արտադրությունն ավելացավ 11 հազար տոննայով, կաթինը՝ 126 հազար տոննայով և այլն[3]։ Այդ բոլորի շնորհիվ կրկնակի անգամ աճեցին կոլտնտեսությունների դրամական եկամուտները, բարձրացավ աշխատանքի արժեքը, բարելավվեց գյուղացիության կենսամակարդակը։

Սակայն այդ հաջողությունները հաջորդ տարիներին տնտեսապես չամրապնդվեցին և հետագա զարգացում չստացան։ Հարցը նրանում է, որ տարվելով բարձր ցուցանիշների հասնելու ձգտումով, գյուղատնտեսության ղեկավարման պրակտիկայում ավելի ու ավելի իրենց զգացնել տվեցին վարչարարական, կոլտնտեսությունների ներքին գործերին չհիմնավորված կերպով միջամտելու մեթոդները, տնտեսական զարգացման խոշոր հարցերի լուծման գործում կամայական մոտեցումը։ Փաստորեն խախտվեց կուսակցության սեպտեմբերյան պլենումի մշակած գյուղատնտեսության զարգացման ճիշտ կուրսը։ Այդ բոլորի արդյունքը եղավ այն, որ 1959 թ. սկսած գյուղատնտեսական մթերքների արտադրության տեմպերը խիստ նվազեցին և լուրջ դժվարություններ առաջացան աշխատավորությանը սննդամթերքներ մատակարարելու ասպարեզում։ Եթե 1955—1959 թթ. ՍՍՌՄ գյուղատնտեսության համախառն արտադրանքը աճեց միջին հաշվով 7,6 տոկոսով, ապա 1959—1964 թթ. միայն 1,9 տոկոսով։ ՀՍՍՌ-ում վիճակն ավելի վատ էր։ Եթե գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1953—1958 թթ. աճեց 68 միլիոն ռուբլով, ապա 1959—1963 թթ. ոչ միայն չաճեց, այլև նվազեց 27 միլիոն ռուբլով[4]։ 1959—1963 թթ. հանրապետությունում հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը աճեց միայն 0,2 ցենտներով, իսկ բամբակի բերքատվությունը նվազեց 10,2 ցենտներով, ծխախոտինը՝ 3,6 գ., շաքարի ճակնդեղինը՝ 9 գ. և այլն[5]։ Ավելի վատ էր անասնաբուծության վիճակը։ 1959—1964 թթ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 17 հազարով, մսի արտադրանքը նվազեց երեք հազար տոննայով, կաթինը՝ մնաց մոտավորապես նույն մակարդակի վրա։ Առանձին շրջաններ ավելի ծանր վիճակի մեջ էին ընկել։ Աշտարակի շրջանում, օրինակ, 1958 թ. համեմատությամբ, 1964 թ. ցանքատարածությունները կրճատվեցին 26,5 տոկոսով, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 10, մսի արտադրությունը՝ 8, բրդինը՝ 42 տոկոսով և այլն[6]։

---

2 Տե՛ս Народное хозяйство Арм. ССР в 1963 г., Ереван, 1964 г., стр. 100.

3 Տե՛ս Там же, стр. 117.

4 Տե՛ս Там же, стр. 68.

5 Տե՛ս Там же, стр. 100.

6. Տե՛ս «Սովետական Հայաստան», 1965 թ., N 79։

Այդ բոլորի հետևանքով թերակատարվեցին գյուղատնտեսության զարգացման առաջադրանքները և թուլացան պետական մթերումների աճի տեմպերը, հետևաբար և նվազեցին կոլտնտեսությունների ռեալ եկամուտները, խախտվեց նրանց նյութական շահագրգռվածության սկզբունքը։ ՍՄԿՊ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումում նշվեց. «Եթե մինչև 1959 թ. տեղի էր ունենում գյուղատնտեսության նկատելի վերելք, ապա հաջորդ ժամանակամիջոցում նա, բստ էության, սկսեց դոփել տեղում»[7]։

Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման տեմպերի թուլացման հիմնական պատճառը, ինչպես բացահայտվեցին կուսակցության մարտյան պլենումում, սոցիալիստական արտադրության տնտեսական օրենքների, հանրային տնտեսության զարգացմամբ կոլտնտեսականների ու սովխոզների բանվորների նյութական շահագրգռվածության, հասարակական և անհատական շահերի ճիշտ զուգակցման սկզբունքների խախտում էր։ Դա հիմնականում արտահայտվեց կենտրոնից, առանց տեղական փորձը և բնակլիմայական պայմանները հաշվի առնելու, շաբլոն ցուցումներ և հրահանգներ տալու մեջ, որով կաշկանդվում էր աշխատավորության տեղական նախաձեռնությունը։ Այսպես, հայտնի է, որ եգիպտացորենը արժեքավոր կուլտուրա է և երկրի մի շարք շրջաններում աչքի է ընկնում իր բարձր բերքատվությամբ։ Սակայն տարվելով շաբլոնով և կամպանիայնությամբ, եգիպտացորենի մշակումը պարտադրվեց հանրապետության բոլոր կոլտնտեսություններին։ Չնայած լեռնային մի շարք կոլտնտեսություններ եգիպտացորենի շնչին բերք էին ստանում, սակայն տարեցտարի նրանց ավելի բարձր պլաններ էր իջեցվում։ Կամոյի շրջանի Հացառատ գյուղում, օրինակ, հեկտարից միջին հաշվով 50 ց. կանաչ զանգված էր ստացվում, որը խոշոր վնաս էր հասցնում կոլտնտեսությանը, բայց ամեն տարի նորից պարտադրվում էր 100 հ. ավելի եգիպտացորենի ցանք կատարել։ Նույնն էր վիճակը նաև բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունների չհիմնավորված կրճատման գործում։ Չնայած հանրապետության մի շարք շրջաններում (Շիրակ, Զանգեզուր) բազմամյա խոտաբույսերը բարձր բերք են տալիս, ստեղծելով անասնաբուծության կերի բազա, սակայն դրանք կամայականորեն դուրս նետվեցին ցանքաշրջանառությունից, որը բացասաբար ազդրադարձավ հանրապետության գյուղատնտեսության զարգացման վրա։ Էական բացասական հետևանքներ ունեցավ նաև հանրապետությունում սեփական հացով ապահովելու մասին ոչնչով չհիմնավորված որոշման, կոլտնտեսությունների խոշորացման և մասսայաբար սովխոզներ ստեղծելու միջոցառումների կենսագործումը։

Հանրապետության սեփական հացով ապահովելու մասին սխալ որոշումը կենսագործելու հետևանքով ծովի մակերևույթից 2000—2500 մ. բարձրության վրա Թալինի, Կամոյի, Ղուկասյանի, Սիսիանի և այլ շրջանների լավագույն արոտավայրերն ու մարգագետիններն օգտագործվեցին հացահատիկ ցանելու համար։ Այդ պատճառով մոտ 100 հազար հեկտար հողամասեր ընդամենը 2—3 տարվա ընթացքում էրոզիայի ենթարկվելով, քայքայվեցին և ոչ պիտանի դարձան գյուղատնտեսական արտադրության համար։ Դա խոշոր վնաս հասցրեց ոչ միայն հացահատիկի արտադրության ավելացմանը, այլև անասնաբուծության հետագա զարգացմանը։

---

7 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1965 թ., № 76։

Հայտնի է, որ կուսակցության սեպտեմբերյան պլենումից հետո հանրապետության մի շարք տնտեսապես թույլ կոլտնտեսությունների բազայի վրա ստեղծվեցին սովխոզներ։ Դա, փաստորեն գյուղատնտեսությանը օգնություն ցույց տալու ձևերից մեկն էր, որովհետև այդ թույլ տնտեսությունների ամրապրնդման ու զարգացման ամբողջ ծախսերը իր վրա էր վերցնում պետությունը։ Սակայն 1958 թ. հետո հանրապետությունում կոլտնտեսությունները սովխոզների վերածելը մասսայական բնույթ ստացավ։ Ընդ որում միշտ չէր, որ հաշվի էր առնվում կոլտնտեսականների ցանկությունը։ Մինչև 1964 թ. կոլտնտեսությունների բազայի վրա հիմնվեցին ավելի քան 100 նոր սովխոզներ, որոնց մեծ մասը այժմ էլ վնասով է աշխատում։ ԵԹԿ Միության մեջ 1965 թ. սկզբներին կոլտնտեսությունների և սովխոզների քանակական հարաբերությունը 8 : 1 էր (որը հիմնականում նոր յուրացված հողերում մասսայական սովխոզներ կազմակերպելու հետևանք էր), ապա ՀՍՍՌ-ում այն կազմեց 4 : 1։ Մասսայական սովխոզներ ստեղծելը և այդ հարցում կամայական գործողությունները, աշխատավորության մեջ կոլտնտեսությունների նկատմամբ առաջ բերեցին վատառողջ տրամադրություններ։ Նրանցից շատերին թվում էր, որ իբր կոլտնտեսություններն արդեն սպառել են իրենց հնարավորությունները և պետք է շուտով վերածվեն սովխոզների։ Դա տեղիք էր տալիս բազմաթիվ չարաշահումների, աշխատանքային կարգապահության թուլացման, արտադրանքի քանակի ու որակի իջեցման։ Կուսակցության մարտյան պլենումը մեկ անգամ ևս ընդգծեց, որ կոլտնտեսություններն ու սովխոզները հանդիսանում են գյուղատնտեսության կազմակերպման հիմնական ձևերը և դեռ երկար ժամանակ գոյություն կունենան։ Հետևաբար, պետք է ոչ թե մտածել մեկը մյուսով փոխարինելու, այլ երկու ձևերն էլ զարգացնելու և ամրապնդելու մասին։

Գյուղատնտեսության ղեկավարման բնագավառում տեղ գտած սուբյեկտիվիզմը արտահայտվեց նաև կուսակցական ու սովետական օրգանների չհիմնավորված վերակառուցումների ու վերակազմումների մեջ։ 1962 թ. խախտելով կուսակցության կանոնագրությունը, տեղական կուսակցական ու սովետական օրգանները արհեստականորեն տարաբաշխվեցին արդյունաբերական և գյուղատնտեսական բնագավառների։ Դրա հետևանքով ստեղծվեց անպատասխանատվության և նյարդայնության մթնոլորտ, բարդացան և դժվարացան տեղական կադրերի աշխատանքները, խախտվեց նրանց հավատը սեփական ուժերի նկատմամբ։ Տվյալ պարագաներում հնարավոր չէր կադրերին ճիշտ դաստիարակել, քննադատաբար գնահատել աշխատանքի արդյունքները։ Հաճախ կազմակերպչական, կենդանի աշխատանքը փոխարինվում էր ժողովներով ու խորհրդակցություններով, բազմատեսակ զեկուցագրերով ու որոշումներով։ ՍՄԿՊ Կենտկոմի 1964 թ. նոյեմբերյան պլենումը դատապարտեց կամայականորեն, ոչնչով չհիմնավորված այդ վերակառուցումները և վերականգնեց կուսակցական ու սովետական միասնական օրգանները։

Կուսակցության մարտյան պլենումը բազմակողմանի վերլուծման ենթարկելով գյուղատնտեսության ետ մնալու պատճառները, պահանջեց հետևողականորեն շտկել թույլ տրված սխալները և վճռական պայքար ծավալել տնտեսության զարգացման պրոցեսում առաջ եկած կարևոր հարցերի լուծման գործում տեղ գտած սնապարծության, կամայականության և վնասակար կամպանիաների դեմ։ Միայն այդ միջոցով կարելի է լայն թափ հաղորդել աշ-

խատավորության ստեղծագործ նախաձեռնության ծավալմանը, որը վերջին հաշվով տնտեսության վերելքի հիմնական գործոններից մեկն է։

Սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման օբյեկտիվ օրենքների անտեսումն ու դրանց նկատմամբ կամայականությունների թույլ տալը արտահայտվեցին նաև գյուղատնտեսական մթերքների մթերումների ու գնումների պրակտիկայում։ Մի շարք մթերքների, առաջին հերթին անասնաբուծական մթերքների, գնման գներն այնքան ցածր էին, որ նույնիսկ չէին ծածկում նրանց արտադրական ծախսերը։ Հաշվարկումները ցույց էին տալիս, որ հանրապետության գյուղատնտեսության համար առավել բարենպաստ տարում՝ 1962 թ., խոշոր եղջերավոր անասունների մեկ տոննայի ինքնարժեքը (կենդանի քաշով) հասնում էր 1126 ռ., իսկ մթերման գինը՝ 818 ռ., մեկ տոննա կաթի ինքնարժեքը՝ 166 ռ., իսկ գնման գինը՝ 104 ռ.[8]։ Հասկանալի է, որ տվյալ պայմաններում խոսք չէր կարող լինել անհրաժեշտ կուտակումների, և ընդլայնված վերարտադրության մասին։ Փաստորեն մի շարք տնտեսություններ անասնաբուծություն զարգացնում էին մյուս ճյուղերի հաշվին, որի հետևանքով տարեցտարի նվազում էին նրանց դրամական եկամուտները, իջնում էր աշխատանքի արժեքը և նվազում աշխատավորության շահագրգռվածությունը։

Վերը հիշատակված սխալներն ու թերությունները չէին կարող բացասաբար չանդրադառնալ մեր երկրի գյուղատնտեսության զարգացման վրա։ Սկսած 1959 թ. գյուղատնտեսության զարգացման տեմպերը խիստ թուլացան, որի հետևանքով նախատեսված պլանները չկատարվեցին։ Ըստ 1959—1965 թթ. յոթնամյա պլանի, գյուղատնտեսության համախառն արտադրանքը պետք է աճեր 70 տոկոսով, բայց անցած վեց տարիների ընթացքում այն աճեց միայն 10 տոկոսով։ ՀՍՍՌ-ում յոթնամյա պլանով նախատեսված էր գյուղատնտեսության համախառն արտադրանքի 82 տոկոս աճ, բայց 1959—1964 թթ. ընթացքում փաստորեն աճեց 5,4 տոկոսով։ Հատկապես խիստ կերպով ետ էին մնում գյուղատնտեսության երկու հիմնական ճյուղերը՝ հացահատիկի արտադրությունը և անասնաբուծությունը։ Մեր երկրում կոմունիստական հասարակարգի կառուցումը հրամայողաբար պահանջում է վճռական միջոցառումներ ձեռնարկել գյուղատնտեսության անհրաժեշտ վերելքն ապահովելու համար։

ՍՄԿՊ Կենտկոմի հոկտեմբերյան և նոյեմբերյան պլենումները բացահայտեցին գյուղատնտեսության ղեկավարման արատավոր մեթոդներ, կոնկրետ միջոցառումներ մշակեցին թույլ տրված սխալները վերացնելու ուղղությամբ։ ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան պլենումը (1965 թ.) ելնելով սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման օրինաչափություններից, մշակեց մի շարք կոնկրետ միջոցառումներ, որոնց կենսագործմամբ ռեալ պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական մթերքների առատություն ստեղծելու համար։

Կուսակցության մարտյան պլենումը առաջին հերթին կարգավորեց գյուղատնտեսական մթերքների մթերումների և գնումների սիստեմը։ Մթերումների նախկին սիստեմում ճիշտ կերպով չէին զուգորդվում համապետական և կոլտնտեսությունների ներտնտեսական շահերը։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ գոյություն ունեցող մթերումների պլանները կայուն չէին։ Որպես կանոն, ամեն տարի գարնանը կոլտնտեսություններին իջեցվում էր գյուղա-

8 Տե՛ս Հայաստանի ժողովրդական տնտեսություն, 1965 թ., № 5, էջ 10։

տնտեսական մթերքների մթերումների պլան, ուր միշտ չէր, որ հաշվի էր առնվում նրանց հնարավորություններն ու զարգացման հեռանկարները։ Թեև համաձայն գոյություն ունեցող կարգի, չէր թույլատրվում հացահատիկի պետական մթերումները կատարել առանց սերմացուի ֆոնդ ստեղծելու և կոլտնտեսականների անձնական օգտագործման ու անասնակերի համար անհրաժեշտ մասհանումներ կատարելու, այնուամենայնիվ, բերքահավաքի ժամանակ դրանք մոռացության էին մատնվում։ Սովորաբար մթերումների պլանները վերանայվում էին, կոլտնտեսություններին լրացուցիչ պլաններ էին իջեցվում, որի հետևանքով մեծ մասամբ վնասվում էին առաջավոր տնտեսությունները։ Հաճախ մթերումների պլանների «գերակատարման» մասին զեկուցելուց հետո, շատ կոլտնտեսություններ պետությունից սերմացու և անասնակեր էին պահանջում։ Իսկ կոլտնտեսականներն անհրաժեշտ մթերքներ ձեռք էին բերում պետական խանութներից։ Դա, իհարկե, աննորմալ վիճակ էր։ Մթերումների այդ արատավոր պրակտիկան խոշոր վնաս հասցրեց ոչ միայն կոլտնտեսություններին ու սովխոզներին, այլև ամբողջ հասարակությանը։

Կուսակցության Կենտկոմի մարտյան պլենումի մշակած միջոցառումները վերջ տվեցին տնտեսության զարգացման սոցիալիստական օրինաչափություններին հակասող այդ ոչ նորմալ երևույթին։ Ելնելով սոցիալիզմի պայմաններում աշխատավորության նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու Լենինյան ցուցումներից, պլենումը որոշեց 1965 թ. անցնել գյուղատնտեսական մթերքների մթերումների կայուն սիստեմի։ Դա հնարավորություն կտա կոլտնտեսություններին և սովխոզներին, նախօրոք իմանալով պետական մթերումների չափը և ելնելով իրենց բնակլիմայական պայմաններից, պլանավորելու այնքան արտադրանք, որքան անհրաժեշտ է ինչպես մթերումները կատարելու, այնպես էլ իրենց կարիքները բավարարելու համար։ Մթերումների նոր սիստեմի հիմնական էությունը կայանում է նրանում, որ այն սահմանվում է մի քանի տարվա համար, որի շնորհիվ զուգակցվում են համապետական ներկոլտնտեսային շահերը։ Միաժամանակ ելնելով ռեալ հաշվարկներից և, երկրի տարբեր գոտիների գյուղատնտեսության զարգացման հեռանկարներից, պլենումը որոշեց 1965—1970 թթ. համար հացահատիկի մթերումների չափը սահմանել 3,4 միլիարդ փութ (նախկինում մթերվող 4 միլիարդ փթի փոխարեն)։

Մթերումների նոր սիստեմի համաձայն, կայուն պլաններ են սահմանվել նաև հանրապետությունների համար, որոնք իրենց հերթին պլաններ պետք է իջեցնեն շրջաններին և յուրաքանչյուր կոլտնտեսությանը, նկատի ունենալով նրանց ռեալ հնարավորությունները և հետագա զարգացման շահերը։ Հաշվի առնելով Հայաստանի բնակլիմայական առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները, միութենական կառավարությունը 1965 թ. սկսած մոտ 3 անգամ կրճատեց հացահատիկի պետական մթերումների չափը։ Դա հնարավորություն կտա հանրապետությունում կատարել գյուղատնտեսական կուլտուրաների ավելի ճիշտ տեղաբաշխում և կոլտնտեսություններն ու սովխոզները մասնագիտացնել առավել շահութաբեր մթերքների արտադրության մեջ։ Հետևաբար, մթերումների նոր սիստեմի շնորհիվ ռեալ հիմքեր են ստեղծվում ոչ միայն առանձին, ետ մնացող ճյուղերի զարգացման համար, այլև ամբողջ գյուղատնտեսության վերելքի համար։

Գյուղատնտեսական մթերքների մթերումներին սիստեմի արմատական վերափոխման հետ մեկտեղ զգալիորեն բարձրացվեցին նաև մթերումների գները (հացահատիկի, ձավարեղեն կուլտուրաների և այլն), որպեսզի այդ կուլտուրաների մշակությամբ զբաղվող կոլտնտեսությունները շահագրգռվեն արտադրության ավելացմամբ։

Սակայն, ինչպես նշվեց մարտյան պլենումում, քանի որ մթերումների հաստատուն պլանով ձեռք բերած մթերքները չեն բավարարելու երկրի հարաճուն պահանջմունքները, նախատեսվում է կազմակերպել նաև արտապլանային գնումներ։ Դա կատարվելու է խիստ կամավոր հիմունքներով և միայն այն տնտեսություններից, որոնք պետական մթերումները կատարելուց և ներտնտեսական կարիքները բավարարելուց հետո կունենան մթերքների որոշակի ավելցուկ։ Ընդ որում արտապլանային գնման գները զգալի չափով բարձր են պետական մթերումների գներից։ Այսպես, պետությունը պլանից դուրս գնված հացահատիկի համար մթերման գներից 50 տոկոսով ավել է վճարելու, իսկ անասնաբուծական մթերքների համար՝ 20—70 տոկոսով։ Այս միջոցառումը նույնպես զգալի չափով կնպաստի կոլտնտեսությունների ու սովխոզների եկամուտների ավելացմանը և կբարձրացնի նրանց շահագրգռվածությունը պլանից դուրս պետությանը մթերքներ վաճառելու խնդրում։ Մոտավոր հաշվարկներով ՀՍՍՌ կոլտնտեսություններն ու սովխոզները մթերումների նոր գների շնորհիվ տարեկան կստանան մոտ 17 միլիոն ռուբլի լրացուցիչ եկամուտ։

Միջոցառումների այս ամբողջ կոմպլեքսը՝ պետական մթերումների քանակի նվազեցումը, մթերման գների բարձրացումը, բարձր գներով արտապլանային գնումների կազմակերպումը պետության կողմից հսկայական ֆինանսական լրացուցիչ հատկացումներ են պահանջում, մանավանդ որ այդ ամենը չի ազդելու պետական մանրածախ գների վրա։ Դա միաժամանակ կնպաստի երկրում ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացմանը և համարժեքային ճիշտ փոխանակության շնորհիվ էլ ավելի կամրապնդվի բանվորա-գյուղացիական դաշինքը։

ՍՄԿՊ Կենտկոմի 1964 թ. հոկտեմբերյան պլենումից առաջ կոպիտ սխալներ էին թույլ տրվել նաև կոլտնտեսային գյուղացիության անձնական և հասարակական շահերի զուգորդման խնդրում։ Հարցը նրանում է, որ սոցիալիստական գյուղացիության ձեռք բերած նվաճումների շնորհիվ երկրի մի շարք առաջավոր տնտեսություններում, կոլտնտեսականները, իրենց կամքով հրաժարվել են օժանդակ տնտեսությունից։ Բայց շուտով դա ևս վերածվեց կամպանիայի։ Ջնայած կուսակցությունը բազմիցս զգուշացրել էր, որ օժանդակ տնտեսություններից կարող են հրաժարվել միայն առաջավոր կոլտնտեսություններում, որտեղ երաշխավորված է աշխատավորների առօրյա պահանջմունքների բավարարումը, տեղերում նման որոշումներ էին պարտադրում նաև թույլ կոլտնտեսություններին։ Ցավալին այն էր, որ վերադաս օրգանները, տարվելով ցուցամոլությամբ, գյուղատնտեսության երևակայական շեշտակի վերելքն ապացուցելու նպատակով, լռելյայն խրախուսում էին նման սխալ որոշումները։ Մյուս կողմից, հատկապես վերջին տարիներին, հանրային աշխատանքներին կոլտնտեսականների թույլ մասնակցությունը պատճառաբանելով օժանդակ տնտեսության մեջ զբաղվածությամբ, միջոցներ էին ձեռնարկվում այն սահմանափակելու համար, որպեսզի նրանք հարկադրված մասնակցեն հանրային աշխատանքներին։ Դա, իհարկե, սխալ կուրս էր և բա-

վականին լուրջ վնաս հասցրեց աշխատավորության սննդամթերքների և առաջին հերթին անասնաբուծական մթերքների մատակարարման գործին։

Գյուղի աշխատավորության եկամուտների ավելացմանն ու նյութական շահագրգռվածության բարձրացմանն է ուղղված նաև կոլտնտեսություններից եկամտահարկ գանձելու նոր կարգը։ Ըստ ՍՍՌՄ Գերագույն սովետի հրամանագրի, 1965 թ. սկսած եկամտահարկը գանձվելու է ոչ թե կոլտնտեսությունների համախառն արտադրանքից, այլ միայն մաքուր եկամտից։ Տնտեսապես հիմնավորված հարկային նոր օրենքի կենսագործմամբ հանրապետության կոլտնտեսությունների եկամտահարկը կնվազի մոտ 4 միլիոն ռուբլով։ Միաժամանակ որոշվեց կոլտնտեսություններից դուրս դրել նրանց նախորդ տարիների ամբողջ պարտքերը, որը մեր հանրապետությունում հասնում էր շուրջ 20 միլիոն ռուբլու։

Կուսակցության ձեռնարկած այս բոլոր միջոցառումները բխում են սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման տնտեսական օրենքներից և ռեալ պայմաններ են ստեղծում գյուղատնտեսության շահութաբերության ավելացման ու ընդլայնված վերարտադրություն հաջողությամբ կազմակերպելու համար։ Այժմ կոլտնտեսություններն ու սովխոզները տնտեսական գործունեության լայն ինքնուրույնություն են ստանում, և կարող են այնպես պլանավորել արտադրությունը, որպեսզի առավելագույն շահույթ ստանան։

Գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացման նպատակով կուսակցության մարտյան պլենումը հատուկ ուշադրություն դարձրեց նրա նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը։ Գաղտնիք չէ, որ այժմ կոլտնտեսությունները ու սովխոզները տրակտորների, ավտոմեքենաների, կոմբայնների և այլ գյուղատնտեսական մեքենաների խիստ կարիք են զգում։ Անբավարար է նաև հղած մեքենաների վերանորոգման, շահագործման և պահպանման վիճակը։ Հաճախ խախտվում են մի շարք կուլտուրաների վարի, ցանքի և բերքահավաքի ագրոնոմիական ժամկետները, որը բերքատվությունը նվազելու և կորուստների հիմնական պատճառներից մեկն է հանդիսանում։ Գյուղատնտեսական արտադրության մեջ աննշան չափերով է օգտագործվում էլեկտրաէներգիան։ Չնայած այդ ուղղությամբ ձեռք բերած հաջողություններին, գյուղատնտեսական կարիքներին հատկացվում է երկրում օգտագործվող էլեկտրաէներգիայի միայն 4 տոկոսը, որից մոտ կեսն է ծախսվում արտադրական նպատակներով։ Աննորմալ վիճակ է, երբ մեքենաների ու շարժիչների առկայության պայմաններում գյուղատնտեսական հիմնական աշխատանքները կատարվում են ձեռքով։

Կոլտնտեսություններին ու սովխոզներին գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անբավարար մատակարարման գործում նույնպես բացասական ազդեցություն ունեցավ տնտեսության ղեկավարման բնագավառում տեղ գտած բյուրոկրատիզմն ու սուբյեկտիվիզմը։ Հաշվի չառնելով սոցիալիստական արտադրության զարգացման տնտեսական օրինաչափությունները, սարեցտարի պակասեցվում էր գյուղատնտեսության մեջ պետության կողմից կապիտալ ներդրումների չափը։ Այսպես, եթե 1954—1958 թթ. գյուղատնտեսության մեջ պետության կողմից ներդրվել էր ժողովրդական տնտեսության զարգացման համար նախատեսված գումարի 11,3 տոկոս, ապա 1959—1965 թթ. կոնտրոլ թվերով այն նախատեսված էր 7,5 տոկոս։ Փաստորեն այնպես էր ստացվում, որ գյուղատնտեսության առջև անընդհատ բարձր խնդիրներ էին

գրվում, իսկ դրանց լուծման համար հատկացվող միջոցները անընդհատ պակասեցվում էին։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ամրապնդելու և նրա մասնագիտացումն ու ինտենսիվացումը հաջողությամբ կենսագործելու նպատակով, ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան պլենումից հետո զգալի չափով ավելացվեցին պետական կապիտալ ներդրումները։ 1965—1970 թթ. հնգամյա պլանով նախատեսվում է գյուղատնտեսության մեջ ներդնել 71 միլիարդ ռուբլի, կամ մոտավորապես այնքան, որքան ներդրվել էր նախապատերազմյան ամբողջ ժամանակաշրջանում։ Այդ գումարի հիմնական մասը ծախսվելու է գյուղատնտեսական արտադրության լայն մեքենայացման ու քիմիացման, ոռոգելի հողատարածությունների ընդարձակման, կուլտուրակենցաղային շինարարության վրա։ Նախատեսվում է առաջիկա հնգամյակի ընթացքում կառուցել գյուղատնտեսական մեքենաներ արտադրող 80 գործարաններ, մոտ 200 վերանորոգման գործարաններ, հաղարավոր մասնագիտացված արհեստանոցներ և այլն։ Մոտավորապես կկրկնապատկվի ավտոմեքենաների, տրակտորների և կոմբայնների արտադրությունը։

Կուսակցության մարտյան պլենումի մշակած տնտեսական միջոցառումներն անկասկած բարերար ազդեցություն կունենան կոլտնտեսությունների ու սովխոզների հետագա զարգացման համար։ Այդ խնդրում մեծ տեղ է հատկացվում նաև գիտության և առաջավոր փորձի նվաճումների արմատավորմանը, կադրերի պատրաստմանը, արտադրության առաջավորներին խրախուսելու և այլն։ Մեր երկրում կոմունիստական շինարարության փորձի ամփոփման և ներկոլտնտեսային դեմոկրատիայի հետագա զարգացման նպատակով նախատեսվում է մշակել կոլտնտեսային արտելի նոր կանոնադրություն և 1966 թ. հրավիրել կոլտնտեսականների համամիութենական 3-րդ համագումարը։

Այսպիսով, կուսակցության մարտյան պլենումը ելնելով սոցիալիստական հասարակարգի զարգացման օրինաչափություններից, տնտեսական ու քաղաքական նշանակություն ունեցող մի շարք միջոցառումներ մշակեց, որոնք հիմնականում ուղղված են գյուղատնտեսության զնկավարման բնագավառում եղած թերությունների վերացմանը, տնտեսության բոլոր ճյուղերի համաչափ զարգացմանը և բանվորա-գյուղացիական դաշինքի հետագա ամրապնդմանը։

Г. М. Гегамян

ЗАДАЧИ РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В СВЕТЕ РЕШЕНИИ МАРТОВСКОГО ПЛЕНУМА ЦК КПСС (1965 г.)

Резюме

Решения мартовского Пленума ЦК КПСС (1965 г.) открыли новые перспективы для дальнейшего развития социалистического сельского хозяйства. Предпринятый в этом направлении ряд неотложных мер имеет важное практическое и теоретическое значение для построения коммунистического общества в нашей стране.

Как было указано на мартовском Пленуме, осуществление курса сентябрьского Пленума ЦК КПСС (1953 г.) значительно укрепило ма-

териально-техническую базу сельского хозяйства, повысило материальную заинтересованность тружеников деревни, в результате чего сельское хозяйство достигло определенных успехов.

Однако эти достижения не были последовательно закреплены. В практике руководства сельским хозяйством все более и более стали применяться методы грубого администрирования, необоснованного вмешательства во внутренние дела колхозов, произвольного решения важнейших вопросов развития экономики и т. д., которые свели на нет разработанный сентябрьским Пленумом ЦК КПСС правильный курс. Вследствии этого, как в целом по стране, так и в Армянской ССР постепенно снизились темпы производства сельскохозяйственных продуктов. Так, например, если в 1953—1958 гг. в республике урожайность зерновых культур повысилась на 2,4 ц., хлопка—5 ц., сахарной свеклы—76 ц., табака—3,6 ц., поголовье крупного рогатого скота увеличилось на 114 тыс., то за 1959—1964 годы поголовье крупного рогатого скота сократилось на 17 тыс., урожайность хлопка снизилась на 10,2 ц., табака—3,6 ц., сахарной свеклы—9 ц., а урожайность зерновых повысилась только на 0,2 ц.

Поэтому, если валовая продукция сельского хозяйства в 1953—1958 гг. увеличилась на 68 млн. рублей, то за 1959—1964 гг. она сократилась на 27 млн. рублей.

Как отметил мартовский Пленум ЦК КПСС, основными причинами снижения темпов развития сельского хозяйства являются игнорирование действующих экономических законов социализма, нарушение принципов сочетания общественных и личных интересов, материальной заинтересованности тружеников сельского хозяйства и т. д. Субъективизм в руководстве сельским хозяйством проявился также в реорганизации партийных и советских органов, в произвольном установлении закупочных цен на сельскохозяйственные продукты.

Мартовский Пленум ЦК КПСС осудил порочные методы руководства и принял решительные меры для исправления допущенных ошибок. Пленум уделил особое внимание укреплению материально-технической базы сельского хозяйства. Как предусмотрено пятилетним планом 1965—1970 гг., в сельское хозяйство будет вложено 71 млрд. рублей, т. е. столько, сколько было вложено за 1945—1964 гг. В целях повышения материальной заинтересованности колхозов и совхозов установлена новая, твердая система заготовок сельскохозяйственных продуктов, повышены закупочные цены, аннулированы долги колхозов и т. д.

Осуществление решений мартовского Пленума ЦК КПСС создает реальные условия для дальнейшего развития сельского хозяйства страны.